Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն` *[signature]* Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզի ք. Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի 1-ին Ա դասարան

Խաչատրյան Նվարդ

2023-2024

**Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները**

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը):
2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

* Աշակերտներին ծանոթացնել վարքի կանոններին

* Կանխել ուշացումներն ու բացակայությունները:

* Դաստիարակել բարեկիրթ ու հանդուրժողական վերաբերմունք ուսուցիչների, մեծահասակների և միմյանցնկատմամբ:

* Ստեղծել կայուն և համերաշխ կոլեկտիվ:

* Նպաստել փոխադարձ օգնության, համագործակցային և հանդուժող միջավայրի ձևավորմանը:

* Էքսկուսիաների ու այցելությունների միջոցով ( թեկուզ Łօնլայն) ծանոթացումը ազգային ավանդական արժեքներին:

*Ստեղծել ծնող-ուսուցիչ-աշակերտ փոխադարձ կապը:

3.(1) Հայեցի դաստիարակություն:

Հոգևոր դաստիարակություն: Աշակերտներին տալ հոգևոր դաստիարակություն: Պահել և պահպանել մայրենի լեզուն,ազգային սովորույթներն ու հոգևոր արժեքները,կրոնն ու եկեղեցին,որը հայապահպանության հիմքն է:Զանազան զրույցների միջոցով դաստիարակել սեր ու նվիրվածություն հայրենիքի նկատմամբ:

3.(2)Գեղագիտական դաստիարակություն:Անձի լիարժեք ձևավորման համար շատ կարևոր նշանակություն ունի նաև գեղագիտական դաստիարակությունը: Երեխաների մեջ վեր հանել գեղեցիկն ընկալելն ու գնահատելը:Կազմակերպել այցելություն մշակութային օջախներ:

3.(3)Ֆիզիկական դաստիարակություն: Ձևավորել անվերապահինամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի՝մարմնի ու կեցվածքի նկատմամբ:Զարգացնել կամային հատկանիշներ,կամք,նպատակասլացություն,հետևել անձնական հիգիենային:

3.(4) Աշխատանքային դաստիարակություն:Աշակերտների մեջ սերև եռանդ սերմանել աշխատանքի նկատմամբ:Մասնակցել դպրոցական շաբաթօրյակներին:Արժեքավորել աշխատանքով ստեղծածը:Սովորեցնել գնահատել սեփական ու այլոց աշխատանքը:

3.(5)Բնապահպանական դաստիարակություն:Երեխաներին բացատրել մեզ շրջապատող բնության դերն ու նշանակությունը մարդուկյանքում,որը կմղի նրանց բնության պահպանմանը և ճիշտ օգտագործմանը: Խնամել շրջակայքի ծառերը և մասնակցել ծառատունկին:

3.(6)Դպրոց-ընտանիք կապը օգնում է երեխայի լիարժեք զարգացմանը,որի համար էլ ստեղծում ենք ծնողական կոմիտե: Հրավիրելծնողական ժողովներ և ծնողներին մասնակից դարձնել կազմակերպվող միջոցառումներին, էքսկուրսիաներին և այցելություններին:

| N | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Ժամ | Կատարող-ներ |
|---|---|---|---|
| 1. | Զրույց<<Աշակերտի կարգապահական կանոնները>>:<br>Զրույց օրվա ռեժիմի մասին: | 1-ին շաբաթ | դասվար |
| 2. | Աշակերտներին սովորեցնել ՀՀ օրհներգը: | 2-րդ շաբաթ | դասվար |
| 3. | Էքսկուրսիա դեպի բնություն: | 3-րդ շաբաթ | դասվար |
| 4. | Զրույց նվիրված անկախության օրվան: | 4-րդ շաբաթ | դասվար |
| 5. | Զրույց դպրոցը և մենք: | 5-րդ շաբաթ | դասվար |
| 6. | Ցերեկույթ <<Աշուն է>> | 6-րդ շաբաթ | դասվար |
| 7. | Բաց դաս նվիրված Ա տառին: | 7-րդ շաբաթ | դասվար |
| 8. | Էքսկուրսիա մոտակա պուրակ: | 8-րդ շաբաթ | դասվար |
| 9. | Զրույց<<Հայաստանը մեր տունն է>>:<br><<Օգնության ձեռքեր>>: | 9-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 10. | Հեքիաթին հյուր: | 10-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | Զրույց <<Ընկերներս և ես>>: | 11-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 12. | Ցերեկույթ <<Մոտենում է ձմեռը>>: | 12-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 13. | Զրույց նվիրված դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի հիշատակի օրվան: | 13-րդ շաբաթ | դասվար |
| 14. | Զրույց <<Ինչու եմ սիրում ձմեռը>>: | 14-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 15. | Պատրաստվում ենք նոր տարվան: | 15-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 16. | Զրույց նվիրված Հայոց բանակի օրվան: | 16-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 17. | Զրույց<<Պահպանել անվտանգության կանոնները>>:<br><<Լինենք առողջ և հետևենք կարգապահական կանոններին>>:<br><<Զվտանգենք մյուսների առողջությունը>>: | 17-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 18. | <<Նվիրիր գիրք>> միջոցառում: | 18-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 19. | Մոտենում է գարունը: | 19-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 20. | Ցերեկույթ նվիրված մարտի 8-ին: | 20-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 21. | Գարնանային զբոսանք մոտակա պուրակում: | 21-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 22. | Ճանապարհային երթևեկության կանոններ: | 22-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |
| 23. | Զրույց նվիրված հայկական ծիսակատարություններին՝ Զատիկ: | 23-րդ շաբաթ | դասվար |
| 24. | Զրույց <<Հայոց ցեղասպանությունը>> թեմայով: | 24-րդ շաբաթ | դասվար |
| 25. | Զրույց<<Մեր իրավունքներն ու պարտականությունները>>:<br><<Ի՞նչն է լավ, ի՞նչն է վատ>>: | 25-րդ շաբաթ | դասվար, աշա-կերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| 26. | Զրույց <<Մայիսյան հաղթանակ-ներ>>: | 26-րդ շաբաթ | դաստիարակ |
| 27. | Ճանապարհային երթևեկության կանոններ: | 27-րդ շաբաթ | դաստիարակ |
| 28. | Ցուցադրություն<<Իմ լավագույն աշխատանքը>>: | 28-րդ շաբաթ | աշա-կերտներ |
| 29. | Զրույց <<Հույզերը և խոսքը>>: | 29-րդ շաբաթ | դաստիարակ |
| 30. | Էքսկուրսիա՝ Դսեղ: | 30-րդ շաբաթ | դաստիարակ, աշա-կերտներ |